ցական և պատերազմական նախարարը չէզոք՝ «պայմանաւ, սակայն, որ այդ կառավարութիւնը ամէն բացառիկ կարևորութիւն ունեցող որոշումները — արտաքին քաղաքականութեան և ընկերային բարենորոգումներու վերաբերեալ որոշումները, ինչպէս և պատերազմութեան տրուելիք հրահանգները — կայացնէ երկու-երրորդի մեծամասնութեամբ, կամ լաւ ևս՝ եօթ ձայնով տասնի վրա»:

Գ. Պօղոս Նուպարին տալ արտաքին գործոց նախարարի պաշտօն կամ Հանրապետութեան դերագոյն ներկայացուցչի դիրք:

Դ. Ներկայ Խորհրդարանը պէտք է արձակի մինչև արևմտահայ պատգամաւորների ընտրութիւնը և նրանց երեք քառորդի Երևան հասնելը: Կարելի է արձակուրդ տալ բիւդջէի քննութիւնից յետոյ, բայց կօալիցիոն կառավարութիւնն էլ գործի պիտի սկսէ Խորհրդարանի արձակուրդից յետոյ:

Ե. Արևմտահայ պատգամաւորների ընտրութեան նախաձեռնութեան և ընտրական օրէնքի որոշման իրաւունքը պատկանում է Ազգ. Պատիրակութեան և կամ կօալիցիոն կառավարութեան:

Զ. Ներկայ Խորհրդարանը արձակուրդի ընթացքին կարող է վերստին նիստ գումարել բացառիկ խնդիրների առթիւ՝ պայմանաւ, որ նշանակուած հարցից զատ ուրիշ որև է բանով չզբաղուի:

Է. Համաձայնութիւնը կը յայտարարուի այն մտքով, որ Ռուսահայաստանն է միացել Թիւրքահայաստանին:

Եթէ ուշի ուշով քննենք երկու կողմի տեսակէտները, կը տեսնենք, որ անհամաձայնութեան գլխաւոր առարկան մնացել էր Խորհրդարանի արձակուրդի ժամանակը. Երևանցիք համաձայնւում էին Խորհրդարանին տալ ժամանակաւոր արձակուրդ, փարիզցիք պնդում էին, որ արձակուրդը լինի անորոշ ժամանակով: Եւ հակառակ Երևանցիների ծայրահեղ հաշտասիրութեան և արած զիջումների, Փարիզը մնաց անյողդողդ: Յրդ նիստում Վ. Թեքէյեանը յայտարարեց. «Եզրակացնելով մեր բոլոր ստացած պատասխանները դրուած առաջարկներուն՝ ես պէտք է հաստատեմ, որ համաձայնութեան ո՛չ մէկ կէտ չկայ վերջին առաջարկներուն վրա, և կը մնայ, որ մենք դրաւոր կերպով արձանագրենք այդ: Ես այլևս ոչէ հնարաւորութիւն չեմ տեսնար միութիւն կայացնելու»:

Պարզ էր եզրակացութիւնը. բանակցութիւնները խզում էին: Եւ նոյ. 6-ին, վերջին նիստում, «դրաւոր կերպով արձանագրուեց» այդ խզումը:

Զուտ պատմական տեսակէտից մօտենալով խնդրին՝ պէտք է ասել, որ Հայաստանի կառավարութիւնն ու ղեկավար շրջանները իրենց մեծամասնութեան մէջ անկեղծօրէն ուզում էին համաձայնութեան գալ Ազգ. Պատիրակութեան հետ: Մասնաւորապէս հանրապետական պատիրակութիւնը բոլոր հնարաւոր և անհնար միջոցները գործ դրեց՝ համոզելու համար Հ. Յ. Դ. Ընդհ. Ժողովին, Խորհրդարանի ու կառավարութեան անդամներին՝ անելու մի շարք կարևոր զիջումներ, որոնց մասին, ուրիշ պայմաններում, խօսելն իսկ անմտութիւն կը լինէր: Բայց Պօղոս Նուպարի մարդիկ չըմբռնեցին վայրկեանի լրջութիւնը և մասամբ էլ զոհ դնացին Երևանի ընդդիմադիր շրջանների սխալ ներշնչումներին: Մի քանի տարի յետոյ, երբ իշխանութեան գլուխ ոչ թէ դաշնակցական ընկերվարականներն էին, այլ